775 Ինչքան հաճախ Քո Հոգին

1. Ինչքան հաճախ Քո Հոգին
Հպարտության համար իմ
Ծածուկ տեղերում անխոս
Պիտի նեղվի ու լացի:
Խոնարհվել եմ ես ուզում,
Քեզ փարվել եմ ես ուզում,
Քեզ հետ ձուլվել եմ ուզում,
Ո՛ւմ Հիսուս:

2. Ուժերով իմ մարդկային
Երբ փորձում եմ խոնարհվել,
Խորացնում եմ ավելի
Անմխիթար վիճակն իմ:
Խոնարհվել եմ ես ուզում,
Քեզ նմանվել եմ ուզում,
Խոնարհ ու հեզ իմ Փրկիչ,
Տե՛ր Հիսուս:

3. Բավ է արդեն, ո՛վ իմ Տեր,
Որ ինքս ինձ համոզեմ,
Թե քայլում եմ Քո ճամփով՝
Խոսքերիդ մեջ մնալով:
Ազատի՛ր ինձ ինձանից,
Ազատի՛ր ինձ իմ եսից,
Ազատի՛ր ինձ այս բեռից,
Ո՛ւմ Հիսուս: